# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
## *Նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների*
## ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՇՁԲ-20/1-ՆԱԽԱԳԻԾ/1
## N 11/347-2019

ք. Երևան «25» 12 2019թ.

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, ի դեմս ծառայության տնօրենի տեղակալ Ա. Հակոբյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Ղարաքիլիսա>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Լ. Ջաղացպանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. Պայմանագրի առարկան**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ***Նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման աշխատանքների*** կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

1) շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնել շինարարական ծրագրի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով,

5) ներկայացնել ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային գրաֆիկը:

## 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված <u>10</u> աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է <u>**11 100 000 (տասնմեկ միլիոն հարյուր հազար)**</u> ՀՀ դրամ, ներառյալ հարկերը:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի աշխատանքների ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| ՀՀ ԱԱԾ | <<Ղարաքիլիսա>> ՍՊԸ |
| ք.Երևան, Նալբանդյան104 | ք. Վանաձոր Տ. Մեծի 63/21 |
| ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի գործառնական վարչություն | "Յունիբանկ" Վանաձորի մ/ճ |
| Հ/հ 900011301067 | Հ/h 24101101941100 |
| ՀՎՀՀ 01507079 | ՀՎՀՀ 06929659 |
| Տնօրենի տեղակալ Ա. Հակոբյան | Տնօրեն Լ. Ջաղացպանյան |

Հավելված N 1
«25» 12 2019թ. կնքված
N11/347-2019 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| | Աշխատանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | կատարման հասցեն | կատարման ժամկետը** |
| 2 | նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում<br>71241200/502 | ՀՀ ԱԱԾ ՍԶ 5060 զ/մ առաջին ՍՊ 4-րդ ՍՈՒ-ի նախագծում<br>1. Նախագծերը մշակել գործող նորմերի պահանջների համաձայն<br>2. Նախագծերը ներկայացնել 7 օրինակից /4 հայերեն, 3 ռուսերեն/<br>3. Նախագիծը ներկայացնել փորձաքննությամբ<br>4. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել պատվիրատուի հետ<br>5. Նախագծերը և նախահաշվային փաստաթղթերը ներկայացնել նաև ռուսերեն տարբերակով<br>6. Նախագծերը | դրամ | 3000000 | 3000000 | 1 | Տավուշի մարզ, գ. Բագրատաշեն | **Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, կնքվելիք համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից՝ 180 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան տվյալ տարվա հունիսի 30-ը:** |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով:<br>Տեխնիկական առաջադրանք<br>1. Տեղամասի ինժեներա-երկրաբանական հետազոտություն<br>2. Տարածքի գեոդեզիական հանույթի մշակում<br>3. Կառույցի էսքիզային լուծումների մշակում և համաձայնեցում<br>4. Նախագծային փաստաթղթերի մշակում հետևյալ կազմով<br>5. Գլխավոր հատակագիծ<br>6. Կառույցների նախագծում,<br>7. Ինժեներական ցանցեր /ջրագիծ, կոյուղի, էլեկտրականություն, գազ, կապ և այլն/<br>8. Շինարարության կազմակերպման մաս<br>9. Նախահաշվային փաստաթղթերի մշակում<br>10. Քաղաքաշինության փորձաքննության եզրակացության տրամադրում: | | | | | | |
| 7 | նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում<br>71241200/507 | ՀՀ ԱԱԾ ՍՁ 5060 զ/մ տնտեսական պահեստների նախագծում | 1. Նախագծերը մշակել գործող նորմերի պահանջների համաձայն<br>2. Նախագծերը ներկայացնել 7 | դրամ | 600000 | 600000 | 1 | Լոռու մարզ, գ. Պուշկինո, Կենտրոնական փող. 2 | **Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, կնքվելիք համաձայնագիրն** |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | օրինակից /4 հայերեն, 3 ռուսերեն/<br>3. Նախագիծը ներկայացնել փործաքննությամբ<br>4. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել պատվիրատուի հետ<br>5. Նախագծերը և նախահաշվային փաստաթղթերը ներկայացնել նաև ռուսերեն տարբերակով<br>6. Նախագծերը ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով<br><u>Տեխնիկական առաջադրանք</u><br>1. Տեղամասի ինժեներա-երկրաբանական հետազոտություն<br>2. Տարածքի գեոդեզիական հանույթի մշակում<br>3. Կառույցի էսքիզային լուծումների մշակում և համաձայնեցում<br>4. Նախագծային փաստաթղթերի մշակում հետևյալ կազմով<br>5. Գլխավոր հատակագիծ<br>6. Կառույցների | | | | | | ուժի մեջ մտնելու պահից՝ 180 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան տվյալ տարվա հունիսի 30-ը: |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | նախագծում<br>7. Ինժեներական ցանցեր /ջրագիծ, կոյուղի, էլեկտրականություն, գազ, կապ և այլն/<br>8. Շինարարության կազմակերպման մաս<br>9. Նախահաշվային փաստաթղթերի մշակում<br>10. Քաղաքաշինության փորձաքննության եզրակացության տրամադրում: | | | | | | |
| 8 | նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում<br>71241200/508 | ՀՀ ԱԱԾ Լոռու ՄՎ Տաշիրի բաժանմունքի վարչական շենքի նախագծում | 1. Նախագծերը մշակել գործող նորմերի պահանջների համաձայն<br>2. Նախագծերը ներկայացնել 7 օրինակից /4 հայերեն, 3 ռուսերեն/<br>3. Նախագիծը ներկայացնել փորձաքննությամբ<br>4. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել պատվիրատուի հետ<br>5. Նախագծերը և նախահաշվային փաստաթղթերը ներկայացնել նաև ռուսերեն | դրամ | 3900000 | 3900000 | 1 | Լոռու մարզ, ք. Տաշիր, Ջահուկյան փող., թիվ 6 | **Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, կնքվելիք համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից՝ 180 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան տվյալ տարվա հունիսի 30-ը:** |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | տարբերակով<br>6. Նախագծերը ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով<br><u>Տեխնիկական առաջադրանք</u><br>1. Տեղամասի ինժեներա-երկրաբանական հետազոտություն<br>2. Տարածքի գեոդեզիական հասույթի մշակում<br>3. Կառույցի էսքիզային լուծումների մշակում և համաձայնեցում<br>4. Նախագծային փաստաթղթերի մշակում հետևյալ կազմով<br>5. Գլխավոր հատակագիծ<br>6. Կառույցների նախագծում<br>7. Ինժեներական ցանցեր /ջրագիծ, կոյուղի, էլեկտրականություն, գազ, կապ և այլն/<br>8. Շինարարության կազմակերպման մաս<br>9. Նախահաշվային փաստաթղթերի մշակում<br>10. Քաղաքաշինության փոծաքննության եզրակացության տրամադրում: | | | | | | |
| 9 | նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում | ՀՀ ԱԱԾ ԴՆՊՎ վարչական շենքի վերանորոգման նախագծում | 1. Նախագծերը մշակել գործող նորմերի պահանջների | դրամ | 900000 | 900000 | 1 | ք. Երևան, Արագածի 95 | Համապատասխան ֆինանսական միջոցներ |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 71241200/509 | | համաձայն<br>2. Նախագծերը ներկայացնել 7 օրինակից /4 հայերեն, 3 ռուսերեն/<br>3. Նախագիծը ներկայացնել փորձաքննությամբ<br>4. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել պատվիրատուի հետ<br>5. Նախագծերը և նախահաշվային փաստաթղթերը ներկայացնել նաև ռուսերեն տարբերակով<br>6. Նախագծերը ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով<br>Տեխնիկական առաջադրանք<br>1. Կազմել տեխնիկական եզրակացություն հաստատության փաստացի իրավիճակի մասին<br>2. Տեխնիկական եզրակացության արդյունքներին համաձայն ներկայացնել<br>ա/ հիմնանորոգման աշխատանքների էսքիզ-նախագիծ | | | | | | նախատեսվելու դեպքում, կնքվելիք համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից՝ 180 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան տվյալ տարվա հունիսի 30-ը: |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | նախնական համաձայնության<br>բ/ հիմնանորոգման աշխատանքների թերությունների ակտ՝ նախնական համաձայնության<br>գ/ հիմնանորոգման նախագծա-նախահաշվային աշխատանքների փաստաթղթեր<br>դ/ նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն: | | | | | | |
| 10 | նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում<br>71241200/510 | ՀՀ ԱԱԾ ՕՓՎ-ի վարչական շենքի վերանորոգման նախագծում | 1. Նախագծերը մշակել գործող նորմերի պահանջների համաձայն<br>2. Նախագծերը ներկայացնել 7 օրինակից /4 հայերեն, 3 ռուսերեն/<br>3. Նախագիծը ներկայացնել փորձաքննությամբ<br>4. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել պատվիրատուի հետ<br>5. Նախագծերը և նախահաշվային փաստաթղթերը ներկայացնել նաև ռուսերեն տարբերակով | դրամ | 700000 | 700000 | 1 | ք. Երևան, Նորքի այգիներ 236 | **Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, կնքվելիք համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից՝ 180 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան տվյալ տարվա հունիսի 30-ը:** |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 6. Նախագծերը ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով<br><u>Տեխնիկական առաջադրանք</u><br>1. Կազմել տեխնիկական եզրակացություն հաստատության փաստացի իրավիճակի մասին<br>2. Տեխնիկական եզրակացության արդյունքներին համաձայն ներկայացնել<br>ա/ հիմնանորոգման աշխատանքների էսքիզ-նախագիծ նախնական համաձայնության<br>բ/ հիմնանորոգման աշխատանքների թերությունների ակտ՝ նախնական համաձայնության<br>գ/ հիմնանորոգման նախագծա-նախահաշվային աշխատանքների փաստաթղթեր<br>դ/ նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն: | | | | | | |
| 11 | նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում<br>71241200/511 | ՀՀ ԱԱԾ ՌՀՀՎ-ի ռադիոկայանների տարածքի և օժանդակ շինությունների վերանորոգման նախագծում | 1. Նախագծերը մշակել գործող նորմերի պահանջների համաձայն<br>2. Նախագծերը ներկայացնել 7 օրինակից /4 | դրամ | 1100000 | 1100000 | 1 | ք. Երևան, Նորքի այգիներ 234 | **Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, կնքվելիք համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից՝ 180** |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հայերեն, 3 ռուսերեն/<br>3. Նախագիծը ներկայացնել փորձաքննությամբ<br>4. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել պատվիրատուի հետ<br>5. Նախագծերը և նախահաշվային փաստաթղթերը ներկայացնել նաև ռուսերեն տարբերակով<br>6. Նախագծերը ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով<br>Տեխնիկական առաջադրանք<br>1. Կազմել տեխնիկական եզրակացություն հաստատության փաստացի իրավիճակի մասին<br>2. Տեխնիկական եզրակացության արդյունքներին համաձայն ներկայացնել<br>ա/ հիմնանորոգման աշխատանքների էսքիզ-նախագիծ նախնական համաձայնության<br>բ/ հիմնանորոգման աշխատանքների | | | | | | օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան տվյալ տարվա հունիսի 30-ը: |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | թերությունների ակտ՝ նախնական համաձայնության<br>գ/ հիմնանորոգման նախագծա-նախահաշվային աշխատանքների փաստաթղթեր<br>դ/ նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն: | | | | | | |
| 14 | նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում<br>71241200/514 | ՀՀ ԱԱԾ Արագածոտնի ՄՎ Թալինի բաժանմունքի շենքի վերանորոգման նախագծում | 1. Նախագծերը մշակել գործող նորմերի պահանջների համաձայն<br>2. Նախագծերը ներկայացնել 7 օրինակից /4 հայերեն, 3 ռուսերեն/<br>3. Նախագիծը ներկայացնել փորձաքննությամբ<br>4. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել պատվիրատուի հետ<br>5. Նախագծերը և նախահաշվային փաստաթղթերը ներկայացնել նաև ռուսերեն տարբերակով<br>6. Նախագծերը ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով<br><u>Տեխնիկական առաջադրանք</u><br>1. Կազմել տեխնիկական | դրամ | 900000 | 900000 | 1 | Արագածոտնի մարզ, ք. Թալին, Գայի 22 | **Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, կնքվելիք համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից՝ 180 օրացուցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան տվյալ տարվա հունիսի 30-ը:** |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | եզրակացություն հաստատության փաստացի իրավիճակի մասին<br>2. Տեխնիկական եզրակացության արդյունքներին համաձայն ներկայացնել<br>ա/ հիմնանորոգման աշխատանքների էսքիզ-նախագիծ նախնական համաձայնության<br>բ/ հիմնանորոգման աշխատանքների թերությունների ակտ՝ նախնական համաձայնության<br>գ/ հիմնանորոգման նախագծա-նախահաշվային աշխատանքների փաստաթղթեր<br>դ/ նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն: | | | | | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ՀՀ ԱԱԾ**
**ք.Երևան, Նալբանդյան104**
**ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի գործառնական վարչություն**
**Հ/հ 900011301067**
**ՀՎՀՀ 01507079**

**Տնօրենի տեղակալ Ա. Հակոբյան**

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

**<<Ղարաքիլիսա>> ՍՊԸ**
**ք. Վանաձոր Տ. Մեծի 63/21**
**"Յունիբանկ"**
**Վանաձորի մ/6**
**Հ/հ 24101101941100**
**ՀՎՀՀ 06929659**

**Տնօրեն Լ. Ջաղացպանյան**

Հավելված N 2
«25» 12 2019թ. կնքված
ծածկագրով պայմանագրի
N11/398-2019

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 2 | 71241200/502 | նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ... % |
| 7 | 71241200/507 | նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ... % |
| 8 | 71241200/508 | նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ... % |
| 9 | 71241200/509 | նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ... % |
| 10 | 71241200/510 | նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ... % |
| 11 | 71241200/511 | նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ... % |
| 14 | 71241200/514 | նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ...% | ... % |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ՀՀ ԱԱԾ**
**ք.Երևան, Նալբանդյան104**
**ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի գործառնական վարչություն**
**Հ/հ 900011301067**
**ՀՎՀՀ 01507079**

**Տնօրենի տեղակալ Ա. Հակոբյան**

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

**<<Ղարաքիլիսա>> ՍՊԸ**
**ք. Վանաձոր Տ. Մեծի 63/21**
**"Յունիբանկ"**
**Վանաձորի մ/ճ**
**Հ/հ 24101101941100**
**ՀՎՀՀ 06929659**

**Տնօրեն Լ. Ջաղացպանյան**

*Հավելված 3*
*«        »            20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| գտնվելու վայրը __________ | գտնվելու վայրը __________ |
| հհ __________ | հհ __________ |
| հվհհ __________ | հվհհ __________ |

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«     » «           » 20    թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «      »      «                   » 20      թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքը ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«      »          20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը — Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. __________________ -ին կնքված N _______________
պայմանագրի կնքման ամսաթիվը — պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն